թեան տան ձերոյ, միաբան փառաւորելով ազա-
տապէս արարիչն Աստուած և տուողն ամենայն
բարութեանց Տէր, մեր որ արժանի մեզ արար
ժառանգել այսքան բարելի աշխարհ այսինքն Արա-
րատեան, և ընդունիլ այնքան բարութիւն 'ի
Տեառնէ, որում ոչ ոք ազգ 'ի բնութենէ մարդոյ
'ի տիեզերս աշխարհի ոչ գտաւ, եթէ յատկա-
պէս սիրոյ և շնորհաց, և Օրհնութեան և այլն
որպէս ասացաք առաջնում։

Այլ նաև փոքրիկ ասացութեամբ 'ի միտս
ձեր ձգելով յարուցանեմ նախանձս վասն լրբու-
թեան բնութեան մերոյ առ 'ի իրաւունս արդա-
րութեան՝ երկայնմտութեամբ լուարուք ինձ ըն-
թերցողք և բարեկամք իմ, զի ամենայն բնու-
թիւն մարդոյ եթէ հաւատացելոց և եթէ անօ-
րինի, խոստովանի որ բնութիւնս մեր գտաւ ա-
րարած, և ունի սկիզբ և ժամանակ որ կազմե-
ցաւ անսկիզբ և անժամանակ և անվախճան մի-
այնոյ արարչէ և յԱստուծոյ մերմէ եթէ ժամա-
նակ, եթէ զօրութիւն, և եթէ արժանաւորու-
թիւն բոլորովին չափով և կարգաւ, այս բնու-
թիւնս մարդոյ մի՛ ձկտից է միտս իւր և մի՛ հա-
ւանեցուսցէ զինքն սղալանօք զի առաւելագոյն
իրս գացի ընդ մէջ իւր քանթէ այն, որում ա-
րարչէն իւրմէ ստացաւ իսկզբանէ և 'ի ժամ
արարչագործութեան Տեառն իւրոյ, քանզի ոչ ետ
մեզ Տէր արարիչն մեր (բայց 'ի զօրութենէ բա-